Շեն բարեգործական հասարակական կազմակերպությունը հայտարարում է գրանցված կոոպերատիվների և ֆերմերների ոչ ֆորմալ խմբերի ընտրության մրցույթ՝ «Պտղաբուծության ներառական արժեշղթաների խթանումը Հայաստանում, Վրաստանում, Ղազախստանում և Մոլդովայում» նախագծի առաջին փուլն իրագործելու համար: Ծրագիրը ֆինանսավորվում է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) կողմից: Ծրագրի նպատակը փոքր ֆերմերների եկամուտների բարելավումն է՝ արժեշղթայում ինտեգրվելու և կոլեկտիվ գործողությունների իրականացման միջոցով:

Կոոպերատիվների և գյուղ. մթերքի արտադրությամբ զբաղվող ոչ ֆորմալ խմբերի զարգացումն ու աջակցումը բաղկացած կլինի երկու փուլերից:

Առաջին փուլում (2016թ. դեկտեմբերից 2018թ. մարտ ժամանակահատված) արտադրողների ընտրված խմբերը կստանան հետևյալ տեխնիկական օգնությունը՝

1. կոոպերատիվի ստեղծման և զարգացման հիմունքների ուսուցում,
2. առանձին խմբերին տեխնիկական օգնություն՝ կախված նրանց կարիքներից
3. տնտեսական խթանիչների համատեղ մշակում՝ ապագա ներդրումների որոշման համար
4. փորձի փոխանակում,
5. ներքին և արտաքին ուսումնական այցեր:

Երկրորդ փուլում (2018թ. ապրիլից 2019թ. մարտ ժամանակահատված) մրցութային հիմունքներով ընտրված արտադրողների խմբերը կստանան հետևյալ տեխնիկական օգնությունը.

1. թեմատիկ դասընթացներ,
2. առանձին խմբերին տեխնիկական օգնություն՝ կախված նրանց կարիքներից,
3. ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմանն ուղղված խորհրդատվություններ,
4. բիզնես-ծրագրերի մշակում և ներդրումների ներգրավմանն ուղղված աջակցություն,
5. սուբսիդիաների ներգրավմանն ուղղված փաստաթղթերի փաթեթի մշակում
6. խմբերի ինտեգրում արժեշղթայում
7. ներդրումների համար փոքր դրամաշնորհների տրամադրում:

Նախագծի առաջին փուլին կարող են մասնակցել խմբեր, որոնք բավարարում են ստորև թվարկված չափորոշիչներին.

1. Արտադրողների ֆորմալ խմբեր (կոոպերատիվներ) և ոչ ֆորմալ խմբեր, որոնք ներգրավված են պտղաբուծության ոլորտում,
2. Արտադրողների խմբերը պետք է բաղկացած լինեն նվազագույնը 15-20 առկա և/կամ պոտենցիալ անդամներից,
3. Խմբի անդամները պետք է լինեն փոքր և միջին ֆերմերներ
4. Խրախուսվում է կանանց խմբերի և երիտասարդ ֆերմերների մասնակցությունը
5. Խմբի անդամները պետք է ցուցաբերեն համատեղ աշխատանքի պոտենցիալ (համատեղ գործունեություն, զարգացման միջնաժամկետ տեսլական, որոշումների համատեղ կայացում)
6. Խմբի անդամները պետք է ունենան առնվազն մեկ համասեռ արտադրանք
7. Խմբի անդամները պետք է ձգտեն արտադրել ընդհանուր բարձրորակ համասեռ արտադրանք՝ ներքին և արտաքին շուկաներում վաճառքի/ իրացման համար
8. Խմբի անդամները պետք է շահագրգիռ լինեն մասնակցելու նախագծային ուսուցողական ծրագրերին, ստանալու տեխնիկական օժանդակություն, խորհրդատվական ծառայություններ և այլն:

Հետաքրքրված խմբերը կարող են դիմումներ ներկայացնել «Շեն» ԲՀԿ info@shen.am էլեկտրոնային հասցեին՝ տրամադրելով հետևյալ փաստաթղթերը.

1. Մոտիվացիոն նամակ, որը կներառի խմբի նկարագրությունը, գործունեության ոլորտները, համատեղ աշխատանքի փորձը կամ պոտենցիալի առկայությունը, առաջիկա 3 տարիների գործողությունների ծրագիրը, համատեղ ներդրումային մտադրությունները, լրացուցիչ այլ տեղեկություններ
2. Խմբի անդամների ցուցակ, որտեղ նշված են անուն –ազգանունները, կոնտակտային տվյալները, գործունեության տեսակը, սեփական կամ վաճակալված պտղաբուծական հողատարածքի մակերեսը
3. Գրանցված կոոպերատիվները լրացուցիչ կտրամադրեն պետռեգիստրի վկայականի պատճենը և վերջին տարեկան հաշվեկշիռը:

Փաստաթղթերի տրամադրման պայմանները.
Փաստաթղթերի փաթեթը կարող է ուղարկվել նաև կնքված ծրարով հետևյալ հասցեով.
«Շեն» Բարեգործական ՀԿ, ք. Երևան, Նալբանդյան փ. 110

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետ.
30 Նոյեմբերի 2016թ.

Լրացուցիչ ինֆորմացիա
Նախագծի մասնակցությանը կհրավիրվեն միայն այն խմբերը, որոնք կընտրվեն լիազորված հանձնաժողովի կողմից: